նիքների տակ պատսպարուելու համար։ Զութակի փոքրիկ դագաղը իրենց թեւի տակ, ներանք անցել էին ահաւոր ճանապարհներ, ռումբերի տակ պայթող քաղաքների մօտից, ծրուած երկաթուղիների վրայէն ցատկռտելով, հրդեհներից խուսափելով։ Ուրիշներ, փայտ կարած մատերով, նստել էին դաշնամուրի առջեւ ձայնանիշներ պաղատելու, մինչ արիւնլուայ ոտքերի տակ պեդալները բաց էին անում երաժշտութեան թարախոտ թոքերը եւ հեծում։

Եւ ահա, հիմա նստել են կալանաւորների նման եւ պատրաստւում են պատասխանել անհասկանալի հարցեր ին։

— Ընկեր Ն–ը։

— Ներկա՛յ։

Տենորը, հաստ, կլոր, փափլիկ մսերով, այտերը կախուած, թեւերը ուժասպառ, ոտքի է կանգնում, նայում է պարապի մէջ եւ ոչինչ չի հասկանում։ Գիշերը չի քնել։ Խոզի խորովածից յետոյ վայր էր ընկել բազկաթոռի վրայ, բայց վարիչը ուրուականի նման առջեւը կանգնեց, եւ խմփոցը բարակ սուլոցով վերջացաւ։ Տենորը ամբողջ իր կեանքը ապրել էր անհոգ։

Ժամանակին նա գեղեցիկ, փոքրիկ, զոհար ձայն ունէր։ Երգում էր քաղցր, արեւելեան համակրելի տաք շունչով։ Կանայք, փող, հարուստների շրջան, դիւրին կեանք։ Բագուի նաւթահորերի տէրերը սիրում էին նրան իրենց սեղանի շուրջը ունենալ։ Մեղմաբարոյ էր, շատ ուտող, թաւշեայ մեծ աչքերով։ Ուրիշ ոչինչ չգիտէր։ Ի՞նչ իր գործն էր։ Միամիտ, տգէտ եւ զգայուն, ինչպէս երաժիշտների մեծ մասը։ Այժմ հարուստները անհետացել էին, տարիքը ղնդերի մէջ կապար էր ածել ու կոկորդը՝ իր զոհարը փչրած ապակի էր փոխել։ Խորհրդային իշխանութիւնը արգիլել էր հռչակաւոր իր «Կռունկը» երգել՝ հայրենասիրական «հակայեղափոխական» այս հառաչը՝ ու նոր ոչ մի երգ կար իր ձայնին յարմարուող ու նոր, ոչ մի կարելիութիւն ապրելու։

— Կարո՞ղ էք ասել, ընկեր, ի՞նչ է լենինեան յեղափոխութեան նպատակը։

Տենորը անորոշ մի ձայն է հանում։ Աչքերը պարապ են, տարտամ դօտին թուլանում է, աջ ձեռքի մատերը բացւում են։

Նախագահը ժպտում է, նայում չորս կողմը, թղթի վրայ նշան անում։

— Բացատրեցէ՛ք խնդրեմ պրոֆիտիութեան նշանակութիւնը Խորհրդային երկրների մէջ։

— Հըմ...հըմ...հըմ...

— Ի՞նչ է կոպերատիվը,— հարցնում է խիստ ձայնով։

Տենորի ծունկերը ծալւում են։

— Անցէ՛ք մի վայրկեան մօտակայ սենեակը, ներս կը դաք, երբ ձեզ կը կանչեն։

Տենորը կարմրում է, ուզում է շարժուել, չի կարողանում։ Աշակերտները բարձր ձայնով ծիծաղում են։

— Անցէ՛ք մի վայրկեան...

Վարիչը մօտենում է, բացատրում։ Տենորը, ոտքերը քարշ տալով, դուրս է գալիս։

— Պէտք է,— բացատրում է պրոլետ–բանաստեղծը, դահլիճին,— ամէն մի քաղաքացի, որ հասկանում է բանուորա–գիւղացիական ըէժիմի իմաստը, իր քաղաքացիական պարտականութիւնը կատարի ազատօրէն արտայայտուելով բացակայ պրոֆիտիութեան անդամի մասին։

Լռութիւն։

— Ոչ ոք ոչինչ չունի՞ ասելու։

Խոր լռութիւն։

— Թո՛ղ ընկերը նե՛րս մտնի։

Ընկերը ներս է մտնում, մտահոգ նստում ու հարեւանին բացատրում. «Չեմ հասկանում, ուսիս...քամի՞ է ինչ է...մի տեսակ ռեմատիզմ»...

Զութակահարները անորոշ բաներ են կըմկըմում, կարմրում, սպրդնում ու դասարանից վռնտուած աշակերտների նման սենեակից դուրս են գալիս եւ ներս մտնում։

Դաշնամուրի իտալական դպրոցին ժպտում են։

— Ֆաշիզմի մասին ի՞նչ գաղափար ունիք։

— Կոմոյի լճի ափին շարքերով կ՚երթային...սանկ մեծ դրօշակներով...հոն, ուր Բիլաջիոն իր նոճիների շուքի տակ...

— Ի՞նչ է նրանց նպատակը։

— Ֆիրենցէ մենք շատ ծանօթներ ունէինք,

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան